| | |
|---|---|
| Ծրագրի անվանումը | Վարդենիս համայնքի Սոթք բնակավայրի 400 գծամետր ճանապարհի ասֆալտապատում |
| Մարզ | Գեղարքունիք |
| Համայնքը /համայնքները | Վարդենիս |
| Համայնքի /բնակավայրի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից, ինչպես նաև մարզկենտրոնից | 175կմ, 75կմ |
| Համայնքի /բնակավայրի բնակչությունը | Վարդենիս՝ 39162<br><br>Սոթք բնակավայր՝ 1039 |
| Սահմանամերձ համայնք/բնակավայր | Վարդենիս համայնքի Սոթք բնակավայրը սահմանամերձ է |
| Բարձր լեռնային համայնք /բնակավայրի | Բարձր լեռնային |
| Ծրագրի ընդհանուր նկարագրությունը, դրա իրականացման անհրաժեշտությունը, ակնկալվող արդյունքները, գործողությունները և շահառուներ | Վարդենիս համայնքի զարգացման նախադրյալներից է համայնքի արտաքին տեսքի բարելավումը, բնակիչների համար բարեկեցության ապահովումը, կենսապայմանների բարելավումը, բնակիչների կյանքի որակի բարձրացումը: Վարդենիս համայնքի Սոթք բնակավայրը սահմանամերձ է, ծովի մակերևույթից գտնվում է 2020 մետր՝ բարձրության վրա: Բնակչության հիմնակկան զբաղմունքը գյուղատնտեսությունն է: Մարդիկ հիմնականում զբաղվում են անասնապահությամբ, կերային կուլտուրաների և կարտոֆիլի մշակմամբ:<br><br>Բնակավայրից ոչ հեռու է գտնվում Սոթքի ոսկու հանքավայրը: Սոթքը «Գեոպրոմայնինգ գոլդ» ՍՊԸ-ի ազդակիր բնակավայր է: Գյուղը ունի դպրոց, մանկապարտեզ, նախակրթարան, ինչպես նաև գործում է բուժկետ, վարչական շենք:<br><br>Սոթք բնակավայրի կենտրոնական փողոցը հողային է, ողջ տարվա ընթացքում ցեխապատ է, դժվարություններ է առաջացնում ինչպես երթևեկության, այնպես էլ հետնիոտների համար: Այս փողոցին են հարում Սոթքի հանրակրթական դպրոցը, մանկապարտեզը, վարչական շենքը: Ծրագրի իրականացմամբ նախատեսվում է ասֆալտապատել 400 գծամետր երկարությամբ, 6 մետր լայնությամբ ճանապարհը:<br><br>Ծրագրի ուղղակի շահառուներն են համարվում Սոթք |

| | |
|---|---|
| | բնակավայրի 1039 բնակիչները, դպրոցականները, մանկապարտեզ հաճախող երեխաները, մանկավարժները:<br><br>Նախագծանախահաշվային փաստաթղթերը դեռևս առկա չեն, բայց նախնական ուսումնասիրությունների համաձայն ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 27.000.000 ՀՀ դրամ /կից ներկայացված է իրականացվելիք աշխատանքերի ֆինանսական նախնական գնահատականները, հաշվարկները/:<br><br>Ծրագիրը ներկայացված է համայնքի 2022-2026թթ հնգամյա զարգացման ծրագրում, որի հաստատման ընթացքում անցել է հանրային քննարկում:<br><br>Ծրագրը համապատասխանում է ՀՀ Կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 1-ի N 1370-Ն որոշմամբ սահմանված համայնքային մասհանումների ծախսման ծրագրով նախատեսված 6)քաղաքաշինություն և 8)տրանսպորտ և ճանապարհաշինություն միջոցառումներին (ուղղություններին): |
| Ծրագրի կատարման ժամկետները | 10.05.2024-31.12.2024<br><br>Ծրագրի ավարտից հետո, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022թ օգոստոսի 4-ի N 1198-Ն որոշման Հավելված N 1-ի 2-րդ կետով սահմանված ժամկետներում կներկայացվի ծրագրի տարեկան հաշվետվությունը: |
| Ծրագրի հնարավոր ռիսկերը | Վարդենիս համայնքը ունի նմանատիպ ծրագրեր իրականացնելու փորձ, քանի որ վերջին տարիներին սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում իրականացվել և իրականացվում են համայնքային նշանակության ճանապարհների ասֆալտապատման աշխատանքներ:<br><br>Վերոնշյալ ծրագրի ռիսկ կարող են լինել ֆորսմաժորային իրավիճակները, երբ անհաղթահարելի ուժի ազդեցությամբ հնարավոր չի լինի իրականացնել ծրագիրը: |

**ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

**Հայաստանի Հանրապետության Վարդենիս համայնքի մասհանումների ծախսման 2024 թվականի ծրագրի ֆինանսական գնահատականները**

| Հ/Հ | Միջոցառման անվանում | Ծրագրի արժեքը, ընդամենը/հազ. դրամ/ | Պետական բյուջե /հազ.դրամ/ |
|---|---|---|---|
| *1* | *Վարդենիս համայնքի Սոթք բնակավայրի 400 գծամետր երկարությամբ փողոցի ասֆալտապատում* | *27.000.000 ՀՀ դրամ* | *27.000.000 ՀՀ դրամ* |
| **1.1** | Շինարարական աշխատանք | 24.972.000 ՀՀ դրամ | 24.972.000 ՀՀ դրամ |
| **1.2** | Նախագծանախահաշվային փաստաթղթերի և փորձաքննության ձեռքբերում | 1.500.000 ՀՀ դրամ | 1.500.000 ՀՀ դրամ |
| **1.3** | Տեխնիկական հսկողություն | 375.000 ՀՀ դրամ | 375.000 ՀՀ դրամ |
| **1.4** | Հեղինակային հսկողություն | 153.000 ՀՀ դրամ | 153.000 ՀՀ դրամ |

**ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ**